

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԼԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

342
Ն-21

13349

Ս. Գ. Ս. Գ. Զ. Ե. Դ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՐԴ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՐԴ
ԿԱՐԴ - 13349

342
Ա-21

ԱԿ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

1008
38632

Ա Դ Ր Բ Ե Ջ Ա Ն Ի
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ
ԲԱԳՈՒ—1931թ.

40395- web.

Гостипография „Красный Восток“
Азполиграф В. С. Н. Х.
Баку, Карантинная, 84
Главлит 2505. Зак. 5053.
Стат-формат Б°.
Тираж 2000.

24215-60

562001

Սորհուրդների 7-րդ համագումարը հրավիրվել և 5-ամյակի 3-րդ վճռական տարվա սկզբին և զրա համար ել նրա վորոշումները բացառիկ մեծ նշանակություն ունեն։

Անցած յերկու տարիները ցույց են տվել, վոր հնգամյակում գրված պլանային յենթադրությունները հերքված են իրականության կողմից, վոր այն ցուցանիշները, վորոնց մենք պետք և հասնելինք վերջին տարում, — մենք կիրադործենք ավելի կարճ ժամկետներում և հենց դրանով 5-ամյակն իրագործելի և դառնում 4 տարում, իսկ արդյունաբերության ու դլուդական տնտեսության մի քանի ճյուղերում դեռ ել առաջ։

Ինչո՞վ կարելի և բացատրել այդպիսի նվաճումները։

Միայն նրանով, վոր «աշխատանքը Սորհրդային Միությունում պատվի, քաջության, փառքի և հերոսության գործ ե», նրանով, վոր մեր Միության միլիոնավոր բանվորներն ու աշխատավորները բռնված են խորին արտադրական ենտուդիազմով, վոր մեր Միության բանվորներն ու դյուդացիները սոցիալիզմ են կառուցում, վոր նրանք համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադան են հանդիսանում։

Ադրբեջանի խորհուրդների 7-րդ համագումարում Բագվի վիշկաների ու դործարանների բանվորները, Գյանջայի ու Նուխու բանվորները, բամբակային Մուդանի ու Թալիշի կոլխոզնիկները, Լեննային Ղաբաբադի ու Քուրդստանի բատրակներն ու չքավորները լսեցին Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարության, Սորհրդային Ադրբեջանի կառավարության հաշվետու զեկուցումները և զեկուցումներ կոլխոզային շինարարության ու ժողովրդական կրթության մասին։

Այն ենտուդիազմը, վորը լերեան և լեկել համագումարի պատվիրակների յելուժներում, այն համոզվածությունը, վորով համագումարը թևակոխել և 5-ամյակի 3-րդ տարին՝ լավագույն ապացույցն և այն բանի, վոր նախընթաց յերկու տարիների մեր նվաճումները կամրապնդվեն, վոր 5-ամյակի 3-րդ—վճռական տարին մեզ նոր հաղթանակներ ու նոր նվաճումներ կբերի։

Անդրկովկասյան ու Ադրբեջանի կառավարությունների՝ համագումարում քննված հաշվետվությունները ցույց են տվել այն նվաճումները, վորոնցով իրավամբ կարող և պարծենալ մեր հանրապետության ամեն աշխատավոր։

Բագվի նավթայինները 1931 թվին տալիս են 15.300.000 տոնն նավթ և արդեն այս տարվա ապրիլի 1-ին կատարում են նավթային 5-ամյակը 2 և կես տարում։

Գյուդական տնտեսության կարևորագույն ճյուղում—բամբակաբուծությունում մենք համագումարի որերին ունեցել ենք 20,2% կոլլեկտիվացում։ Կոլխոզների առողջ աճումը և չքավորամիջակային տնտեսությունների ձգտումը դեպի խոշոր, կոլլեկտիվ արտադրությունն՝ ապահովում են պլանա-

յին նախագծերի կատարումը՝ գյուղական տնտեսության 1931 թ. կոլեկտիվացման վերաբերմամբ:

Գյուղական տնտեսության մեջ զբաղված են հսկայական միջոցներ պրոլետարական պետությունը գյուղական տնտեսությունը տանում է զարգացման սոցիալիստական ուղիով, ապահովում է խոշոր մեքենական տեխնիկայի արմատացումը, խորհրդային Ադրբեջանի ռազմային ծածկում են մեքենա-արականության կայանների ցանցով:

Ժողովրդական լուսավորության բնագավառում, դրագիտության, բնահանուր ուսման համար տարվող արշավի բնագավառում, ժողովրդական տնտեսության համար կադրեր պատրաստելու գործում մենք միանգամայն բացառիկ նվաճումներ ունենք: Հանրապետության մեջ դրագիտության սովոր, վոր 1921 թվին յեղել է 11,2, համազումների մոմենտին հասցրված է յեղել 30-ի: Ընդհանուր կրթության մեջ զբաղված է մոտ 200.000 յերեխա, 1932 թվի սկզբին տարրական դպրոցը կընդգրկի 8—12 տարեկան հասակի բոլոր յերեխաներին: մենք ունենք 12 բարձրագույն դպրոց, վորտեղ պատրաստում ենք մեր արդյունաբերության և գյուղական տնտեսության համար հրամանատարներ, բժիշկներ, մանկավարժներ և այլն:

Վերջապես, խորհուրդների 7-րդ համագումարը խորհուրդային Ադրբեջանի խորհուրդների վերնորոշությունների արդյունքը հաշվի առավ և մատնանշեց, վոր քաղաքի ու գյուղի աշխատավոր մասսաների քաղաքական ակտիվությունը բավականաչափ աճել է: խորհուրդների վերնորոշությունները տվել են կոմունիստական աշխատանքի ենտեղիստների նոր բառալիսններ, հանքերի և գործարանների հարվածայիններ, կոլտոշնիկներ, մեքենա-արականության կայանների և սովխոզների բանվորներ:

Նոր խորհուրդները պետք է ամրապնդեն մասսաների այդ ակտիվությունը, գործնական աշխատանքում ուղղելով այդ պլանային առաջադրությունների կատարմանն ու գերակատարմանը և հենց ղրանով ապահովեն 5-ամյակի 3-րդ—վճռական տարվա հաջողությունը:

խորհուրդների 7-րդ համագումարը տվել է ճշգրիտ առաջադրություններ և նշել է մեր հետագա առաջախաղացման ուղիները՝ արդյունաբերության, գյուղական տնտեսության և կուլտուրական շինարարության բնագավառներում:

Այս առաջադրությունները—սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը—պետք է կատարվեն ժամանակին,—դա է պահանջում հեղափոխության շահը:

Այդպիսի պայմաններում խորհուրդների 7-րդ համագումարի վորոշումներն ունեն պատմական նշանակություն:

Այդ վորոշումներին ծանոթ պիտի լինի մեր հանրապետության ամեն մի աշխատավոր, գրանք պետք է դառնան յուրաքանչյուր գյուղխորհրդի, ամեն մի խորհրդային ակտիվիստի, սեկցիայի անդամի ամեն մի աշխատավորի քննության առարկա:

Այդ վորոշումները կատարելու վրա պիտի ուղղվի մեր ուշադրությունը. գրանք—այդ վորոշումները պետք էլ ավելի համախմբեն բոլոր աշխատավորներին կոմունիստական կուսակցության և կառավարության ջուրջը, նոր հաղթանակների, նոր նվաճումների համար մղվող պայքարի շուրջը:

ԲԱՆԱԶԵՎ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԿ. ՏԵՐ-ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Լսելով ընկ. ՏԵՐ-ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ զեկուցումը՝ Անդրկովկասյան կառավարության գործունեության մասին՝ խորհուրդների 7-րդ համագործընկերության համագումարը վորոշում է.—

Անդրկովկասյան կառավարության քաղաքական գիծը համարել ուղիղ ու նրա գործնական աշխատանքին հավանություն տալ:

7-րդ համագործընկերության համագումարը մատնանշում է, վոր շնորհիվ կուսակցության հիմնական գիծը և Լենինյան ուղղային քաղաքականությունն տանելուն՝ մեծ նվաճումներ են արվել Անդրկովկասի ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

խորհրդային Միության խոշորագույն նվաճումները՝ սոցիալիզմի կառուցման գործում, կուսակցության քաղաքականությունը՝ ազգային քաղաքականության հետևողական իրականացման հիման վրա՝ տնտեսապես հետամնաց ռազմային վճռականապես առաջ քաշելու,—այն ռազմային, վոր առաջ ցարական ինքնակալության զաղուխային շահագործման առարկաներ էին, ազգամիջյան կոլիզիների ասպարեղ էին, այն կոլիզիներ, վոր վառում էին թե ցարական կառավարությունը և թե տիրապետող բուրժուական-ազգայնական կուսակցությունները (մուսավաթիստները, դաշնակներն ու մենշևիկները),—ապահովել են Անդրֆեդերացիայի խոշոր տնտեսական աճումը, ամրապնդել են ազգային խաղաղությունը և բոլոր անհրաժեշտ նախապայմաններն են ստեղծել՝ ինդուստրացման ու գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման տեմպերն արագացնելու համար:

2. Համագումարը հաստատում է, վոր վերջին տարվա ընթացքում Անդրկովկասի արդյունաբերության զարգացման տեմպերն աճել են 65%-ով, այսինքն բավական գերազանցել են ամբողջ խորհրդային Միության արդյունաբերական զարգացման ամբողջ տեմպերին (25%): Անցած տարի նավթահանությունն աճել է համալրա 20%-ով՝ գերազանցելով 1913 թվի նավթահանությունը 40%-ով: Անդրֆեդերացիայի ամբողջ արդյունաբերությունում հիմնական ներդրումներն աճել են 60 %-ով, պետական բյուջեն 54%-ով: Գյուղատնտեսության բնագավառում էլ ունեցել ենք զարգացման նույնպիսի տեմպեր: Տեխնիկական կուլտուրաների ցանքապիտակ տարածություններն ավելացել են անցած տարի 30%-ով: Կոլեկտիվացրած տնտեսությունների տոկոսը, վոր 28—29 թ. յեղել է 1,4%, բարձրաձրել է 17,6%-ի: Հսկայական կերպով աճել է սովխոզների շինարարությունը:

Գյուղական տնտեսության համայնացման բնագավառում ունեցած հաջողությունները ապահովում են գյուղում կապիտալիստական տարրերի հետագա գոլթս մղումն ու նախապատրաստում են բոլոր պայմանները համա-

տարած կոնկրետիվացման ու այդ հիման վրա Անդրկովկասի գլուղում կու-
լակին՝ վորպես դասակարգի վոչնչացնելու համար:

Կուլտուրական շինարարութեան բնագավառում կառավարութեան կու-
տարած ահագին աշխատանքը հնարավորութիւնն է տալիս միանգամայն մո-
տենալու անգրագիտութեան համատարած վերացմանն ամբողջ Անդրկովկա-
սում և, մասնավորապէս, Ադրբեջանում, վորտեղ անգրագիտութեան տոկո-
սը՝ ինքնակալութեան քաղաքականութեան հետեանքով՝ առանձնապէս բար-
ձրը է յեղել: Ահագին հաջողութիւններ կան նույնպէս ժողովրդական կրթու-
թեան ցանցի շինարարութեան մեջ, Անդրկովկասի բոլոր ազգութիւնների
աշխատավոր կանանց լայ մասնաներին, մասնավորապէս, թրքահայերին
սոցիալիստական շինարարութեանը մասնակից անելու բնագավառում (ար-
դւնահաճութեան մեջ գրավելը, կուլտուր-կենցաղային հիմնարկների ցանցի
դարգացումը և այլն):

3. Ընդգծելով այդ ահագին նվաճումները՝ համագումարը մատնանշում
է, վոր կուսակցութեան և կառավարութեան՝ հնգամյակի 2-րդ տարվա վե-
րաբերմամբ մի շարք կարեւորագույն առաջադրութիւնները լիովին չեն
կատարված. նախաճանաչութեան պլանը կատարված է միայն 95,8%-ով,
բամբակամթերութեանը—43%-ով և այլն. այդ բանը պահանջում է Անդր-
կովկասի հանրապետութիւններից լարված բոլշևիկներն պայքար մղել՝ բո-
լոր թերութիւնները վերացնելու և հնգամյակի 3-րդ վճռական տարվա հա-
մար նախագծված տեմպերն ապահովելու համար:

Անդրֆեդերացիայի ժողովրդական տնտեսութեան ծավալման և սո-
ցիալիստական վերակառուցման ընդունված պլանները կարելի է իրակա-
նացնել միայն վճռական պայքար մղելով կուսակցութեան հիմնական գծից
արվող շեղումների դեմ, առաջին հերթին աջ ոպորտունիստների՝ վորպէս
գլխավոր վտանգի դեմ, վճռականորեն արմատախիլ անելով աջ ոպորտու-
նիստական պրակտիկական տեղերում և ամեն մի հաշտվողականութիւնն զեպի
այդ շեղումներն, անգադար կովելով բուրժուական-նացիոնալիստական ազ-
գեցութիւնների դեմ, չքավորների, կոլսոզնիկների և միջակ գյուղացինե-
րի մասսաները կազմակերպելով՝ կապիտալիստական տարրերի դեմ՝ վճա-
կան հարձակում տանելու համար:

Այդ խնդիրների իրագործումը պահանջում է անդրկովկասյան բոլոր
խորհրդային որդանների աշխատանքը դարձնել յերեսը դեպի արտադրու-
թիւնը և դեպի կոլսոզային շարժումը:

Խորհուրդների վերընտրութիւնները լիովին հերքել են Սիւրցով-Լոմի-
նաձեյի աջ—«ձախ» բլոկի սուտ պնդումները՝ Անդրկովկասի ստորին խոր-
հրդային ապարատի մասին, նրանց այն բամբասանքը, թէ բանվորների
ու գյուղացիների կարիքներին ազայական-ֆեոդալական վերաբերմունք է
ցույց տրվում: Համագումարը խորհրդային որդանների կարեւորագույն անե-
լիքն է համարում՝ ել ավելի ամրապնդել Անդրկովկասի աշխատավոր մաս-
սաների ակտիվութիւնը՝ խորհուրդների գործնական աշխատանքում, ամեն
կերպ ամրապնդել պրոլետարական դիկտատուրայի որդանները—խորհուրդ-
ները՝ մօրելիցացիայի յենթարկելով մասսաների նախաձեռնութիւնը՝ Ան-
դրֆեդերացիայի սոցիալիստական շինարարութեան տեմպերն արագացնե-
լու համար և վճռականորեն վերացնելու գլուղի մեր աշխատանքի թուլու-
թիւնները և թերութիւնները: Այդ պայմաններում՝ կատարումն ստուգե-

լու մասին տրված լենինյան ցուցմունքը կարեւորագույն անելիք է հանդի-
սանում Անդրկովկասի խորհրդային իշխանութեան համար:

Անդրֆեդերացիայի ամրապնդումը հիմնական նախապայմանն է հան-
դիսանում Անդրկովկասի սոցիալիստական շինարարութեան հաջողութեան
համար: Ամբողջովին հավանութիւնն տալով՝ կոմկուսի ղեկավարութեամբ
ձեռք առնված միջոցներին՝ Անդրֆեդերացիան ամրապնդելու, նրա տնտե-
սական բազան ուժեղացնելու համար (անդրկովկասյան ժողկոմատներ հաս-
տատելը, մասնավորապէս՝ Անդրժողատեղերխորհ, Անդրհողժողկոմատ)—7-րդ
համագումարն անհրաժեշտ է համարում լիովին ապահովել՝ Անդրկովկասի
բոլոր ազգութիւնների աշխատավորների յեղբայրութեան և միութեան ել
ավելի ամրապնդումը:

ԲԱՆԱԶԵՎ

ԱՂՐԲԵՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Աղբբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Խորհուրդների 7-րդ համագումարը լսելով և քննելով ընկ. Բուսյան թղթագրի ղեկըցումը՝ Աղբբեջանի կառավարության գործունեության մասին, Խորհրդային Աղբբեջանի կառավարության քաղաքական գիծը համարում է միանգամայն ուղիղ և հավանություն է տալիս նրա ամբողջ գործունեությանը:

Համագումարը հատուկ զոհություն մատնանշում է, վոր կառավարությունը Լենինյան աղգային քաղաքականությունն ուղիղ տանելով ապահովել է լիակատար աղգային խաղաղությունը: Անդրկովկասի ժողովուրդների յեղբայրական գործակցությունը, Աղբբեջանի ժողովուրդների կուլտուր-տնտեսական զարգացումը և նրանց հաղորդակից է արել սոցիալիստական շինարարության ու կուլտուրական հեղափոխության ընդհանուր շարժմանը: Անդրֆեդերացիայի ու ամբողջ Խորհրդային Միության տնտեսական ուժի ամրապնդման հիման վրա:

Համագումարը մատնանշում է արդյունաբերության արագ զարգացման և գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում յեղած ահագին նվաճումները: Այդ բոլոր նվաճումները արդյունք են կապիտալիստական տարրերի դեմ տարվող ծավալուն սոցիալիստական հարձակման ուղիղ քաղաքականություն՝ բոլշևիկյան ՎԵԿԱՊԵ-ի և նրա Լենինյան Կենտկոմի փորձված ղեկավարությամբ:

Ն ա վ թ ա յ ի ն ա ր դ յ ու ն ա ր ե ր ու թ յ ա ն մ ե ջ՝ 1929-30 թվին—28-29 թ. համեմատությամբ նավթահանությունն ավելացել է 18,5%-ով հորափորությունը—27%-ով և նավթի մշակումը 31%-ով: Վերցրած տեմպերը լիովին ապահովում են նավթային 5-ամյակը 2 և կես տարում իրագործելը: Համագումարը հանձնարարում է կառավարությանն ապահովելու 1931 թ. նավթահանության պլանը—15,300,000 տոնն:

Հ ա ն ր ա պ ե տ ա կ ա ն ա ր դ յ ու ն ա ր ե ր ու թ յ ա ն ընդհանուր արտադրանքը, վոր 1927-28 թվին յեղել է 26.422 հազար ռուբլու, 29—30 թվին հասել է 54,034 հազար ռուբլու: Կիմական ներդրումները 2,171,400 ռուբլուց հասել են 5,919,000 ռուբլու: Համագումարը հանձնարարում է կառավարությանը 1931 թվի պլանով նախատեսված՝ հանրապետական արդյունաբերության հիմնական ներդրումների համար ապահովել 17,714 հազար ռ., նրա ընդհանուր արտադրանքը հասցնել—107,620 հազար ռ., իսկ Անդրժողատնոգերխորհի կողմից միացվող արդյունաբերության արտադրանքի հետ միասին—139,670 հազար ռուբլու: միաժամանակ շարունակել աշխատանքը տեղական կուլտուրային արդյունաբերության ամրապնդման ու զարգացման համար, արագ թափով զարգացնել Աղբբեջանի բնական հարստությունները հետազոտելու աշխատանքը, արագացնել Դաշքասանի և

ալյումինի հարցերի լուծումն ու լաջնորեն ծավալել Աղբբեջանի էլեկտրոֆիկացիայի գործը:

Սոցիալիստական արդյունաբերության զարգացման և 5-ամյակի առաջին յերկու տարիների պլանի հաջող իրականացնելու գործում վճռական դեր է խաղացել պրոլետարիատի հեղափոխական ենտուզիզմը (սոցմրցումը, հարվածայնություն, հանդիպակած արդֆինպլան): Արդյունաբերության աճման հետ միասին ավելանում է թե բանվորների թիվը (28 թվին—62 հազար, իսկ 30 թվին 70,748), մանավանդ արմատական բնակչությունից, և թե լավանում է բանվոր դասակարգի նյութական ու կուլտուր-կենցաղային զրուկությունը:

Համագումարը հատկապես մատնանշում է կանանց աշխատանքի աճումն արդյունաբերությունում և հանձնարարում է կառավարությանը, կանանց, մանավանդ թրքուհիներին արդյունաբերության մեջ գրավելու միջոցառումներն ուժեղացնել, անհրաժեշտ պայմաններ ստեղծել կանանց ընտանեկան-կենցաղային սարկությունից ազատելու համար (հասարակական ծաշարաններ, լվացատներ, մսուրներ և այլն կազմակերպել):

Համագումարը հավանություն է տալիս կառավարության նախագծած միջոցառումներին պրոլետարիատի և աշխատավոր մասսաների նյութական-կենցաղային մակարդակը բարձրացնելու, բանվոր դասակարգի ուսուցումը բարձրացնելու, նրան լաջն գործածություն ապրանքների մատակարարումը լալացնելու, փակ բաշխիչների ցանցը զարգացնելու, բանվորական բնակչինարարությունն արագացնելու և կուլտուր-կենցաղային հիմնարկներին շինարարության համար:

Դրա հետ միասին համագումարը մատնանշում է հատարական սնունդի գործի անբավարար զարգացումը և քաղաքամերձ տնտեսությունների շինարարության չափազանց դանդաղ տեմպը, վորը չի համապատասխանում մեր առաջ դրած խնդրին՝ բանվորական մատակարարումը լավացնելու մասին:

Համագումարը հանձնարարում է կառավարությանն՝ ապահովել 1931 թվին բանվոր դասակարգի աշխատավորձի բարձրացումը 6%-ից վոչ պակաս, զուգակցելով այդ բանն աշխատանքի արտադրողականության աճման հետ, ամրապնդել և լաջնացնել փակ բաշխիչների ցանցը, վճռական միջոցներ ձեռք առնել լաջնացնելու և համապատասխան կերպով դնելու հոտարական սնունդի գործն ու առանձին ուղադրություն դարձնել քաղաքամերձ տնտեսությունների լաջն շինարարության վրա:

Համագումարը մատնանշում է, վոր մեծ նվաճումներ կան գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Հավանություն տալով կառավարության բոլոր միջոցառումներին, վորոնք ուղղված են Աղբբեջանը դարձնելու 2-րդ բամբակային բազան միության մանածագործական արդյունաբերության համար, և բամբակին՝ Աղբբեջանի գյուղատնտեսական կուլտուրների մեջ հիմնական, առաջնորդող նշանակություն տալով, համագումարը միաժամանակ նշում է, վոր վերջին տարիներում բամբակի պլանը չի կատարված: Համագումարը հանձնարարում է կառավարությանը՝ վճռական միջոցներ ձեռք առնել ապահովելու բամբակային ցանքսերի ընդարձակումը և 1931 թվին 205 հազար հեկտարի հասցնելու ու նրա բերքատվության ամեն կերպ բարձրացումը, այդ խնդիրների շուրջը

պիտի համախմբել խորհրդային իշխանության թե կենտրոնական և թե տեղական որդանների ու կոլխոզնիկների, բատրակների և չքավոր-միջակ գյուղացիության ամբողջ մասնաչի ուղարկութունը:

Համագումարը մատնանշում է գյուղական տնտեսության սոցիալիստական սեկտորի մեծ աճումը (սովխոզների թիվը 1931 թվին հասել է 25-ի՝ 127,000 հեկտար տարածությամբ, 28 թվին 13-ի փոխարեն, վորոնք աճել են 15,000 հեկտար տարածություն): հավանություն է տալիս կառավարության պլանին՝ 1931 թ. սովխոզների տարածությունը հասցնելու 400,000 հեկտարի և միաժամանակ հանձնարարում է արագացնել այն միջոցառումների իրագործումը, վորոնք վերաբերում են սովխոզների բանվորների աշխատանքի ուղիղ կազմակերպելուն, — լավացնել նրանց կուլտուր-կենցաղային սպասարկումը, նույնպես և ամեն կերպ լայնացնել սովխոզների աշխատանքը՝ շրջապատող կոլխոզներին և չքավոր-միջակային գյուղացիական տնտեսություններին ագրոկուլտուրական ոգնության համար:

Համագումարն անհրաժեշտ է համարում առանձնապես մատնանշել Ադրբեյջանի գյուղի կոլեկտիվացման մեծ աճումը, չքավոր-միջակային տնտեսությունների ուժեղացող ձգտումը կոլխոզ մտնելու, կոլխոզների ամրապնդումը, նրանց ցանքային տարածության լայնացումը և բերքատու վության բարձրացումը՝ ավելի բարձր գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոտեխնիկական կուլտուրայի հիման վրա. (կոլխոզների թիվը, վոր 28 թվին լեղել է 287, ավելացել է և 30 թվին հասել 1,847-ի՝ ընդգրկելով 56,046 տնտեսություն՝ 1929 թվի 4,500 տնտեսության փոխարեն):

Համագումարը հանձնարարում է կառավարությանը, 1931 թվին ապահովել գյուղական տնտեսության կոլեկտիվացման աճումը մինչև 20—30% հանրապետության բոլոր տնտեսությունների վերաբերմամբ և բամբակային շրջաններում տնտեսությունների 50%-ից վոչ պակաս, ուժեղացնել կոլխոզների ագրոսպասարկումը, նրանց գյուղատնտեսական մեքենաներ և ինվենտար մատակարարելը, ու բոլոր միջոցները ձեռք առնել, վոր աշխատանքն ուղիղ կազմակերպվի և արտադրանքն ուղիղ բաժանվի:

Համագումարը մատնանշում է, վոր հաշվետու ժամանակաշրջանում կառավարությունը մեծ աշխատանք է տարել՝ գյուղական տնտեսության մեքենայացման վերաբերմամբ (Ադրբեյջանի դաշտերում 1930 թվին տրակտորների թիվը հասել է 900-ի, մեքենա-տրակտորային կայանների թիվն աճում է, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների ներմուծումն ավելանում է): Համագումարը հանձնարարում է կառավարությանը՝ 31 թվին ապահովել 13 նոր մեքենա-տրակտորային կայանների կառուցումը, վորոնցից 12-ը բամբակային ուղիներում և Ադրբեյջանի դաշտերում տրակտորների ընդհանուր թիվը հասցնելու 1900-ի:

Դրա հետ միասին՝ համագումարը հանձնարարում է կառավարությանն ուժեղացնել միջոցառումների իրագործման, կոլխոզների հողաբաժանման, ագրոսպասարկման, ջրային տնտեսության զարգացման վերաբերմամբ և կանոնավորելու ջրգտագործումը, 205 հազար հեկտար բամբակային պլանի կատարումը լիովին ապահովելու համար:

Հաշվի առնելով, վոր բամբակից հետո՝ Խորհրդային Ադրբեյջանի գյուղական տնտեսության մեջ առանձնապես կարևոր դեր է խաղում անասնապահությունը, համագումարը հանձնարարում է կառավարությանը՝ իրա-

գործել միջոցառումները սոցիալիստական անասնապահության բնագավառում, առանձնապես մշակելով կերի բազայի հարցը, վորը հսկայական նշանակութուն ունի քոչվորական անասնապահական տնտեսությունները նստակյաց դարձնելու գործում:

Համագումարը հավանություն է տալիս այն միջոցառումներին, վոր կառավարությունը ձեռք է առել Խորհ. Ադրբեյջանի գյուղատնտեսության մեջ նոր տեխնիկական կուլտուրաներ մտցնելու համար (կաուչուկաբեր բույսեր, կենսի, ռամի և այլն), վորոնք խորհրդային արդյունաբերությունը պիտի ազատեն արտասահմանյան հում նյութեր ներմուծելուց, և հանձնարարում է խստիվ ռադոնացնել կուլտուրաներն ու արագորեն առաջ տանել նրանց զարգացումը՝ առանձին ուղարկություն դարձնելով կաուչուկաբերներին:

Սոցիալիստական շինարարության բուռն աճումը քաղաքում և գյուղում, կոլխոզների և սովխոզների աճումը, կուլակության շահագործական ձգտումները սահմանափակելու և դուրս մղելու քաղաքականությունն ու վերջինից կուլակությանը — վորպես դասակարգի վոչնչացման քաղաքականությանն անցնելը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա, 1931 — վրձնական տարում սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը, — այս բոլորն առաջ են բերում կապիտալիստական տարրերի կատաղի ընդդիմադրությունը:

Սրված դասակարգային պայքարի այդ պայմաններում անխուսափելի են ամեն տեսակի տատանումները կուլակցության հիմնական գծից: Համագումարը հանձնարարում է կառավարությանը շարունակել վճռական պայքարը թեքումների դեմ, առաջին հերթին աջ ոպորտունիզմի դեմ՝ վորպես գլխավոր վտանգի դեմ, նրա «ձախ» աջակիցների դեմ և դեպի այդ թեքումները յեղած ամեն մի հաշտվողականության դեմ:

Տնտեսական նվաճումների հետ միասին և նրանց հիման վրա Խորհրդային Ադրբեյջանը մեծ նվաճումներ է ունեցել նաև սոցիալիստական-կուլտուրական առաջադրությունները լուծելու ասպարիզում:

Համագումարն առանձին գոհանակությամբ մատնանշում է կառավարության վորոշումը՝ լիովին վերացնելու անգրագիտությունը և Խորհ. Ադրբեյջանի ամբողջ տերրիտորիայում ընդհանուր պարտադիր տարրական ուսում մտցնելու 1932-33 թվին:

Համագումարը մատնանշում է, վոր սուր բեկում է կատարվել անգրագիտության վերացման գործում և բնակչության գրագիտության տոկոսը բարձրացել է 30-ի: Արագորեն աճել է ուսումնական հիմնարկների և նրանցում սովորողների թիվը. զարգացել է դպրոցական ցանցը, ուր ավանդվում է ազգային փոքրամասնությունների լեզուներով և մեծացել է բարձրագույն դպրոցների թիվն ու նրանք ամրապնդվել են արդյունաբերության հետ անմիջապես կապվելով:

Համագումարը հանձնարարում է կառավարությանն՝ ապահովել նշանակված ժամկետներին անգրագիտության վերացման և ընդհանուր տարրական ուսման պլանների իրագործումը. ուժեղացնել աշխատանքը կանոնացնել, մանավանդ թրքուհիներին կուլտուրական շինարարությանը գրավելու համար. լայնացնել բանֆակները և նախապատրաստական կուրսերը, վորոնք բանվորներից, կոլխոզնիկներից, բատրակներից, գյուղի չքավորա-

ընթացումը խափանելու և կապերը եւս պատրաստվում բարձրագույն դպրոցները մտնելու համար:

Սոցիալիստական շինարարութեան բուն առումը և նրա տեմպերի անշեղ արագացումը բացառիկ լարումն են պահանջում՝ վորակյալ բանվորական ուժի և մասնագետների անհրաժեշտ կազմեր պատրաստելու համար: Արդունաբերութեան և գյուղական տնտեսութեան մեջ բացված վնասատվութիւնը, վորպես պրոլետարիատի թշնամիների դասակարգային կռիւի մեթոդներից մեկը, եւ ավելի և խորացնում այդ խնդիրը:

Համագումարը մատնանշում է, վոր կառավարութիւնը մեծ նվաճում է ունեցել կազմեր պատրաստելու գործում, մանավանդ հանրապետութեան հիմնական բնակչութեան: Ֆարգալուէի, պրոֆկուրսերի լայն ծավալած շինարարութիւնը, մասնագիտական տեխնիկումների և բարձրագույն դպրոցների ցանցն արդունաբերութեան և գյուղական տնտեսութեան արդեն տվել են հազարավոր նոր վորակյալ գործիչներ:

Համագումարը հանձնարարում է կառավարութեանը՝ ամեն կերպ, արագորեն զարգացնել մասնագետներ ու վորակյալ բանվորական ուժ պատրաստելը, և հավանութիւն է տալիս կառավարութեան վորոշմանը՝ մի շարք բարձրագույն դպրոցներ կենտրոնացնելու հանրապետութեան շուրջ արդյունաբերական կենտրոնում—Գյանշայում:

Համագումարը մատնանշում է, վոր կառավարութիւնը բավական հաջողութիւններ է ունեցել առողջապահութեան բնագավառում. աճել է առողջապահութեան հիմնարկների ընդհանուր ցանցը, մանավանդ գյուղում, զարգացել է հիվանդանոցային շինարարութիւնը և մեծացել է մահճակալների թիւը, կառուցվել է առաջին հանրապետական բանվոր-գյուղացիական սանատորիան, նույնպես և ձեռք են առնել մի շարք միջոցառումներ՝ պայքարելու սոցիալ-կենցաղային հիվանդութիւնների դեմ: Համագումարը հանձնարարում է կառավարութեանը՝ ուժեղացնելու աշխատանքը աշխատավոր մասսաների առողջութիւնը պահպանելու գործում, —լայն ծավալել սանիտարա-նախազգուշական միջոցառումների գործադրութիւնը և սան-լուսավորական աշխատանքը, ուժեղացնել պայքարը մալարիայի և այլ սոցիալական-կենցաղային հիվանդութիւնների դեմ, լավացնել սովխոզների ու կոլխոզների բժշկական սպասարկումը և շարունակել գյուղում բժշկական հիմնարկների ամրապնդումն ու զարգացումը:

Համագումարը մատնանշում է պետական և տեղական բյուջեի բավականին աճումը, մանավանդ, տնտեսական և սոցիալական-կուլտուրական միջոցառումների գծով:

Համագումարը հանձնարարում է կառավարութեանը՝ վճռականորեն վերակառուցել ֆինասական որդանների ստորին խորհրդային ապարատի աշխատանքը՝ խորհրդային կառավարութեան ղեկավարի մեջ կացնելու գործում՝ թե կապիտալիստական ելեմենտներն յերևան բերելու և տուրքավորելու գծով, և թե ֆինանսական պլանները կատարելու գծով (միջոցների մօրիւիլիցիա, հաստատուն բյուջետային-վարկային դիսցիպլինայի հաստատում և այլն):

Համագումարը հավանութիւն է տալիս կառավարութեան կողմից տարած շրջանների լիկվիդացիային և հաստատում է այդ միջոցառման մի շարք բարենպաստ հետեանքները. —ստորին խորհրդային որդանների ամրա-

պնդում, նրանց տնտեսական բաղայի լայնացում, նրանց ակտիվութեան, գյուղական հասարակայնութեան բարձրացում և կենտրոնի հետ անմիջական կապի ամրապնդում:

Միաժամանակ համագումարը հանձնարարում է կառավարութեանը՝ ապահովելու ռաշոնները պատրաստված և դասակարգայնորեն կայուն գործիչների կազմերով, ուժեղացնելու դատական-հետաքննական ապարատների աշխատանքը և միջոցներ ձեռք առնելու՝ ռաշոնների փոստ-հեռագրական ու հեռախոսային կապը կենտրոնի և ռաշոնների միջև ամրապնդելու ու զարգացնելու համար:

Համագումարը հանձնարարում է կառավարութեանը՝ ներկա 1931 թվին քննել ու վորոշել հանրապետական գյուղատնտեսական ռաշոնացման ու ռաշոնների մասնագիտացման հարցը:

Արդյունաբերութեան ահագին աճումը և գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնութիւնը պահանջում են ամեն կերպ ամրապնդել ու զարգացնել տրանսպորտը:

Հաստատելով, վոր մեծացել է բեռների շրջանառութիւնը թե յերկաթուղում և թե ջրային տրանսպորտում, աչքի ընկնող աշխատանք է կատարվել Զուլֆա-Բագու յերկաթուղու կառուցման գործում և բավականաչափ լավացել ու լայնացել է շոսքների ու սայլի ճանապարհների շինարարութիւնը:

Համագումարը նշում է, վոր կասպիական նավագնացութիւնը լրիվ չի կատարել փոխադրութիւնների պլանը, տրանսպորտում աշխատանքային դիսցիպլինան անբավարար դրութեան մեջ է և միանգամայն անբավարար է ոգտագործվում բնակչութեան աշխատանքը ճանապարհների կառուցման մեջ:

Համագումարը հանձնարարում է կառավարութեանը՝ լիովին ապահովելու 1931 թվի նավթային փոխադրութիւնները, լավացնելու Բագու-Լենքորան ծովային գծի շարժումը, բոլոր միջոցները ձեռք առնել աշխատանքային դիսցիպլինան տրանսպորտում բարձրացնելու համար, աշակցելով աշխատանքի սոցիալիստական նոր ձևերը—սոցմրցումն ու հարվածայնութիւնն ամրապնդելուն և լայնորեն ոգտագործել բնակչութեան աշխատանքը՝ ճանապարհային աշխատանքային պարտիքի կարգով՝ խնդիրներ և սայլի ճանապարհներ շինելու համար:

Հավանութիւն տալով կառավարութեան գործունեյութեանը՝ յերկրի պաշտպանելու ընդունակութիւնն ուժեղացնելու,—Կարմիր Բանակի և Նավատորմի ուժն ամրապնդելու, աշխատավորների մեջ ռազմական գիտելիքներն արմատացնելուն աջակցելու ասպարիզում,—հանձնարարում է կառավարութեանը շարունակելու այդ աշխատանքը՝ նրա մեջ գրավելով խորհրդային հասարակայնութիւնը, մանավանդ գյուղերում:

ԲԱՆԱԶԵՎ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՒՆՈՋՑԵՆՏՐԻ ՎԱՐՉՈՒ- ՔՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. ՅՈՒՍՈՒՑ ԹԱՅԻՐՈՎԼԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Կուսակցության գլխավոր գիծն անշեղ տանելու հիման վրա, պայ-
քարելով կուսակցության և նրա աջ—«ձախ» ազնվատուրայի դեմ՝ խորհրդային
իշխանությունը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, վրձ-
նական նվաճումներ ե ունեցել գյուղական տնտեսության կոլեկտիվացման
գործում:

2. Զբաղվող միջակային մասսաների մասսայական շարժումը դեպի կոլ-
խոզները պայմանավորված է նրանով, վոր խոշոր սոցիալիստական տնտե-
սության առավելությունները՝ մանր գյուղացիական անհատական տնտե-
սությունների հանդեպ՝ ստուգված և հաստատված են բազմաթիվ գյուղա-
ցիների փորձով: Գյուղական տնտեսության զարգացման սոցիալիստական
ուղին ազատում է չքավորներին և միջակներին կուսակային ստրկություն-
ներից, ապահովում է խոշոր մեքենայական տեխնիկայի արմատացումը գյու-
ղական տնտեսությունում, վորովհետև «մանր տնտեսությունները կարիքից
ազատվել չեն կարող» (Լենին):

3. Խորհրդային Աղբյուրներում արդեն մինչև խորհուրդների 7-րդ հա-
մագումարը կոլխոզ են մտել Աղբյուրների բոլոր տնտեսությունների 17,6% -ը,
իսկ բամբակային ուսյուններում—20,2%: Դա արդյունք է «կոլեկտիվաց-
ման առաջին շրջանում Անդրկովկասում կոլեկտիվացման գործում թույլ
տրված «ձախ» սխալների և կուսակցական գծի ծռումների դեմ մղած վճա-
րան պայքարի, ներկա ետապում գլխավոր վտանգ հանդիսացող աջ թեք-
ման դեմ մղած վճարական պայքարի, ջախջախիչ հարված հասցնելով կուսա-
կին» (Վեկտ. Պե-ի (բ) Անդրկովկասի վորոշումից):

4. Սակայն, չնայած այդ նվաճումներին, խորհուրդները չեն կարողա-
ցել կարևորագույն տնտեսական-քաղաքական կամպանիաները և գյուղում
տարվող միջոցառումները (գարնանացանի կամպանիան, բամբակահավաքի
կամպանիան, հացի, մսի, բրդի, բրնձի մթերությունները, ներքին միջոցների
մոբիլիզացիան, պայմանագրումը և այլն)—կապել դեպի կոլխոզները նոր
ալիք կազմակերպելու խնդիրներին հետ: Միանգամայն ճիշտ է դրել Վեկտ. Պե-ի
(բ) Անդրկովկասում խորհուրդների յերեսը վճարականորեն դեպի կոլ-
խոզային շարժումը գարնանու խնդիրը, վորովհետև խորհուրդները, վորպես
մասսայական կազմակերպություն, դեռևս հեռու են մնում կոլխոզային շարժ-
ման մի շարք շատ կարևոր հարցերից: Գյուղխորհուրդները, ընդհանրապես
կոլեկտիվացման նախաձեռնողներ չեն հանդիսանում: Չեն գնում շարժման
առաջին շարքերում, դեռևս ներկայացնելով «հեղափոխության յերեկվա ուրը»
(Մոլոտով):

5. Այդ-ուրտունիստական գործնականը, «ինքնահոսի» վրա հույս դը-
նելը՝ կոլխոզային շարժման մեջ անցյալ տարի յեղած «ձախ» ծռումներից
հետո՝ հանգել են այն բանին, վոր մի շարք ուսյուններում կոլխոզները դեռ
չեն ձևակերպված, նրանցում աշխատանքի ուղիղ կազմակերպում չկա, չեն
արմատացված աշխատանքի նոր սոցիալիստական ձևերը (հարվածայնու-
թյուն, սոցմրցում, բրիգադներ և այլն), անթույլատրելի դանդաղ տեմ-
պով է տարվում գարնանացանի կամպանիային պատրաստվելը (գյուղա-
տնտեսական ինվենտարի նորոգումը, վորոգման ցանցի մաքրումը, ցել անե-
կ այլն), չկան արտադրական խորհրդակցություններ, լավ չի դրված աշխա-
տանքը չքավորների հետ, յեկամուտները բաժանվում են ըստ շնչերի և վոր
թե կոլխոզիկի աշխատանքի քանակի և վորակի համեմատ, ուսյուրծկոմ-
ները, ուսյուրխոզմիությունները և գյուղխորհուրդները թույլ են ղեկավա-
րում կոլխոզները:

6. Խորհուրդներին անելիքը պիտի լինի՝ բուլշեիկներն գլուխ կանգնել
դեպի կոլխոզ յեղած հոսանքին, հաղթահարելով ինքնահոսի վրա աջ ուր-
տունիստներն հույսը դնելը, կոլխոզային շարժման տարեբայնությունը,
թույլ չտալով և բնում խեղդելով նույնպես «ձախ» ծռումների ու վարչա-
վորելու պրակտիկան:

Միայն իսկական բուլշեիկյան ղեկավարությունը կարող է ապահովել
կոլխոզների կողմից գարնանը 94 հազար հեկտար բամբակ ցանելու պլանի
կատարումը և Վեկտ. Պե-ի (բ) ղեկավարության վորոշումների իրագործումը,
թե ամբողջ 1931 թվին բամբակային ուսյուններում տնտեսությունների 50%
և ամբողջ Աղբյուրներում 20—25%-ը պիտի կոլեկտիվացնել:

7. Կոլխոզների համար պալքարելու կազմակերպելով չքավորների և
միջակների մասսաներին, այդ պալքարում հենվելով կոլխոզիկների վրա՝
խորհուրդներն ել ավելի վճարական պալքար պետք է ծավալեն կու-
լակության, կոլխոզների այդ անհաշտ թշնամիների դեմ, վորչհացնելով կու-
լակների բոլոր վորձերը, վոր նրանք անում են խանգարելու կուսակցության
և խորհրդային իշխանության միջոցառումները՝ գյուղական տնտեսության
սոցիալիստական վերակառուցման համար:

8. Խորհուրդներին 7-րդ համագումարն առաջարկում է բոլոր խորհրդա-
յին և տնտեսական ու կոոպերատիվ կազմակերպություններին ապահովել
կառավարության կողմից սահմանած ժամկետներին իրականացնելու գար-
նանային ցանքսի նախապատրաստական միջոցառումները՝ ցանքսային
պլանները կոլխոզներին հասցնել, կոլխոզի ապահովագրման ֆոնդերը հա-
վաքել, կոլխոզային ինվենտարը նորոգել, վորոգման ցանցը մաքրել, փետր-
վարը հայտարարել հարվածային ամիս—գյուղատնտեսական ինվենտարը
նորոգելու և վորոգման ցանցը մաքրելու համար, այդ նպատակով բանվո-
րական բրիգադներ կազմակերպելով և ուսյուններն ուղարկելով:

Կոլխոզների և մեքենա-նորակտորային կայանների արաադրական
պլանների սկսված քննարկումը և ընդունելն ողտագործել՝ կոլխոզիկների
միջև աշխատանքն ուղիղ բաժանելու, բրիգադներ ընտրելու, բրիգադներն
ուղիղ կազմակերպելու և նրանց պլաններն ու առաջադրությունները ճշ-
գրիտ բաժանելու համար:

9. Խորհուրդներն առանձին ուղադրություն պետք է դարձնեն կոլխոզ-
ներում աշխատանքը և արտադրությունը կազմակերպելու վրա: Անհրաժեշտ

ե վերջ տալ յեկամուսն ըստ շնչերի բաժանելու գոյութիւնն ունեցող սկզբ-
բունքին, հենց դրանով առաջն առնելով «կուլակութեան», դատարկապորտ-
ների, հասարակական աշխատանքից ոգտվել սիրողների՝ առանց մասնակ-
ցելու այդ աշխատանքին» (ՎԵՄՊԵ-ի (բ) Կենտկոմի վորոշումից):

Բոլոր կոլխոզները, վորպես կանոն, պետք է կազմակերպեն բերքի բա-
ժանում համաձայն թափած աշխատանքի քանակի և վորակի, ինչպես վոր
պահանջում են կուսակցութեան ու կառավարութեան հրահանգները:

10. Ռայգործկոմիները, կոլխոզային-կոոպերատիվ կազմակերպութիւն-
ները՝ դրսում աշխատանքի գնալու և կոլխոզներում ձմեռային աշխատանք-
ներ կազմակերպելու կոնկրետ հարցերը պիտի դնեն արտադրական խոր-
հրդակցութիւնների, գյուղխորհուրդների և ռայգործկոմիների պլենումների
գործնական պրակտիկ քննութեանը:

11. Աղբրջանի խորհուրդների 7-րդ համագումարը՝ խորհրդային, կոլ-
խոզային և կոոպերատիվ կազմակերպութիւնների ուղադրութիւնը հատկա-
պես սրում է մեքենա-տրակտորային կայանների և մեքենա-տրակտորային
խմբերի առանձին դերի վրա, վորպես գյուղական տնտեսութեան սոցիա-
լիստական վերակառուցման՝ առաջավոր տեխնիկայով զինված կարևորա-
գուցն հենակետերի:

12. Համագումարն առաջարկում է Հողժողկոմատին՝ վերախմբավորել
հողաշինարարական ուժերը և միջոցներն այնպես, վորպեսզի մինչև մարտի
15-ն ապահովեն լիովին հողաշինարարական կարիքները՝ առաջին հերթին
տեխնիկական կուլտուրաների ռայոնների կոլխոզներում:

Դրա հետ միասին՝ համագումարն առաջարկում է Հողժողկոմատին՝
կոլխոզներին տալ ամենալավ մոտիկ հողերը—մի ամբողջ կտորով:

13. Յենելով կուսակցութեան 16-րդ համագումարի վորոշումներից
այն մասին, թե «կոլխոզային շարժման տվյալ շրջանում կոլխոզի հիմնական
ձեռ գյուղատնտեսական արտելն է», անհրաժեշտ է, թույլ չտալով վոչ մի
շեղում լենինյան սկզբունքից՝ կոլխոզային շարժման կամավորութեան մա-
սին, գյուղացիների մեջ լայն աշխատանք ծավալել գյուղատնտեսական ար-
տելներ կազմակերպելու համար, անհաշտ պայքար մղելով գյուղատնտեսա-
կան արտելի—վորպես կոլլեկտիվացման հիմնական ձևի թերազնահատութեան
դեմ:

Դրա հետ միասին «տեխնիկական ցածր բաղա և չքավութեան ու բա-
տրակութեան անբավարար կազմակերպվածութիւնն ունեցող ռայոններում
պետք է խնդիր դնել՝ ուժեղացնելու հողամշակման ընկերութիւններ կազ-
մակերպելու աշխատանքը, վորպես գյուղատնտեսական արտելին անցնելու
ձև» (ՎԵՄՊԵ-ի (բ) Անդրբերկրկոմի վորոշումից):

14. Կոլխոզային-կոոպերատիվ կազմակերպութիւնները, ռայգործկոմ-
ները և գյուղխորհուրդները պետք է առանձին ուղադրութիւնն դարձնեն
գոյութիւնն ունեցող կոմունաների ամրապնդմանը, վորպես կոլխոզային
շարժման բարձր ձև, նրանց դարձնելով խոշոր սոցիալիստական տնտեսու-
թիւնների լավագույն որինակներ՝ նրանցում ամեն կերպ արմատացնելով
աշխատանքի կազմակերպման սոցիալիստական ձևերը:

15. Համագումարն առաջարկում է խորհրդային, կոլխոզային և կոո-
պերատիվ կազմակերպութիւններին՝ ուժեղացնել կոլխոզների ազդեցու-
թիւնն անհատականների վրա, ապահովել կոլխոզնիկների ձիշտ վերաբեր-

մունքը դեպի անհատականները, ուժեղացնել կազմակերպչական-մասսայա-
կան աշխատանքը չքավորների և միջակների մեջ, հենց դրանով ապահովե-
լով անհրաժեշտ պայմանները կոլխոզային շարժման նոր վերելքի համար:

16. Բատրակներին, չքավորներին և միջակներին լայնորեն կոլխոզ
գրավելու հետ միասին՝ անհրաժեշտ ամեն մի միջոց ձեռք առնել կոլխոզ-
ներից դուրս քշելու բոլոր դասակարգային-խորթ տարրերին:

17. Աղբրջանի խորհուրդների 7-րդ համագումարն առաջարկում է բո-
լոր տնտեսական-կոոպերատիվ և խորհրդային կազմակերպութիւններին
ապահովելու լիակատար ուղադրութիւնն 25-հազարականների աշխատանքին,
ամրապնդելով նրանց կոլխոզային աշխատանքներին, ապահովել նրանց բը-
նակարաններով, կանոնավորել աշխատավարձի հարցերը, կանոնավոր կեր-
պոր մատակարարել նրանց արդյունաբերական ապրանքներ:

Դրա հետ միասին առաջարկել Կոլխոզցիներին, տեղական խորհրդային
որդաններին մասսայական աշխատանք տանելու՝ տեխնիկական կուլտուրա-
ների ռայոններում կոլխոզային ակտիվ պատրաստելու համար (բրիգադներ,
աշխատանքի կազմակերպիչներ, կին-ակտիվիստներ, ագրոլիադորներ, սիլոս
պատրաստողներ և այլն)—10 հազար հոգուց վոչ պակաս քանակութեամբ:

18. Համագումարի հանձնարարում է խորհրդային և կոլխոզային կազ-
մակերպութիւններին տեղերում ապահովել մասսայական աշխատանքի նոր
ձևերի կիրառումը,—կազմակերպել արտադրական խորհրդակցութիւններ,
ստեղծել նոր կոլխոզներ կազմակերպելու նախաձեռնող խմբակներ, հարվա-
ծայինների ու կոլխոզնիկների հավաքներ, հարվածային բրիգադներ, կոլխոզ-
ների վարչութիւնների հաշվետվութիւնն—անհատականների առջև, ծավա-
լել սոցմրցումը, հարվածայնութիւնը, հասարակական բուքսիրը, հանդիպա-
կաց պլանները:

19. Խորհուրդների 7-րդ համագումարը խորհրդային և կոոպերատիվ
կազմակերպութիւններին առանձին ուղադրութիւնն է հրավիրում չքավոր
և միջակ կանանց մեջ աշխատանք տանելու վրա՝ նրանց կոլխոզ գրավելու
համար, նույնպես և կոլտնտեսուհիների մեջ՝ նրանց կուլտուր քաղաքական
ժակարգակը բարձրացնելու նպատակով: Համագումարն անհրաժեշտ է հա-
մարում անհապաղ ձեռնարկել կոլխոզներում մանկապարտեզներ և մանկա-
մսուրներ կազմակերպելուն: Համագումարը վորպես մարտական խնդիր է
դնում բոլոր անգրագետ կոլխոզնիկներին անգրագիտութեան վերացման կե-
տերով ընդգրկելը՝ լայնորեն գործադրելով մասսայական կուլտարչավի մե-
թոդները, նույնպես անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքը՝ ռադիոֆիկա-
ցիայի յենթարկելու կոլխոզները, զարգացնելու շարժական կինոները, մաս-
սայական եժանազին գրականութիւնն մատակարարել՝ նվիրված գյուղական
տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման և հիմնական տնտեսա-
կան-քաղաքական հարցերին:

7-րդ համագումարը համարում է, վոր Առողջժողկոմատի, Լուսժողկո-
մատի և Աղբրիտիֆակի որդանները միանգամայն անբավարար կուլտուր-
կենցաղային ոգնութիւնն են ցույց տալիս կոլխոզներին, և հանձնարարում
է հիշված կոմիսարիատներին ու հիմնարկներին սուր բեկում առաջ բերել
իրենց աշխատանքում՝ բարելավելու ղեկավարութիւնը և այդ կարիքների
համար տրվող բյուջետային հատկացումներն ուժեղացնելու:

1008
38632

24215-60

20. Համագումարն անհրաժեշտ է համարում ավելի խորացնել աշխատանքը կարմիր բանակայինների մեջ՝ կոլխոզային շինարարության հարցերի վերաբերմամբ:

21. Խորհուրդների 7-րդ համագումարն տաջարկում է բոլոր ռայզդորժոմներին, գյուղխորհուրդներին և տնտեսական-կոոպերատիվ կազմակերպություններին՝ լայնորեն ժողովրդականացնել կոլխոզնիկների բանվորագյուղացիական մասսաների մեջ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Խորհրդային Միության Ժողկոմխորհի հունվարի 20-ի դիմումը և դրա հիման վրա հանած Ադրբեջանի (բ) Կենտկոմի և Խորհ. Ադրբեջանի Ժողկոմխորհի այս տարվա փետրվարի 8-ի վորոշումը՝ գարնանացանի պայմանագրման մասին:

21. Ադրբեջանի խորհուրդների 7-րդ համագումարը համոզված է, վոր գյուղխորհուրդները յերեսը դեպի կոլեկտիվացում դարձնելով, կուժեղացնեն իրենց ղեկավար դերը կոլխոզային շինարարության մեջ:

Միայն Լենինյան կուսակցության ղեկավարութեամբ, հաղթահարելով աջ ուսուրտունիստական պրակտիկան, կազմակերպելով կոլխոզնիկների, չքավորների և միջակների ամենալայն մասսաները պրոլետարական դիկտաուրացի որդանների—խորհուրդների շուրջը՝ կտպահովեն գյուղի սոցիալիստական վերակառուցման մասին համագումարի վորոշումների կյանքում իրագործելը, ուժեղացնելով գյուղի կապիտալիստական տարրերի սահմանափակումը և դուրս մղումը, պատրաստելով բոլոր պայմանները կուլակության—վորպես դասակարգի վերացման համար՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

ԲԱՆԱԶԵՎ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՏՈՐԻՆ ԱՊԱՐԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 7-ՐԴ ՀԱՄԱ-
ԳՈՒՄԱՐԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

1. Խորհուրդների հաշվետվական-վերնադրական վերջացած կամպանիան ցույց տվավ, վոր նշանավոր չափերով աճել է քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների քաղաքական ակտիվությունը: Հաշվետվական-վերնադրական ժողովներին աշխատավորները մասսայական մասնակցություն են ցույց տվել. հաշվետվական գյուղական ընդհանուր ժողովներում միջին թվով ներկա են յեղել 64,9%ը, կանայք—43,4%: Ընտրությունների ժամանակ ներկայացել են բոլոր ընտրողների 73,8%ը, իսկ կանանց մասնակցությունը 61%-ի. բատրակները ու բանվորների 79%-ն և մասնակցել ընտրություններին, կոլխոզնիկների՝ 79,7%ը: Քաղաքային խորհուրդներում ընտրողների մասնակցությունը տատանվել է 85 և 95%-ի միջև:

Խորհուրդների՝ վերնադրությունների արդյունքը ցույց է տալիս, վոր նրանց սոցիալական կազմը նշանավոր չափերով բարելավվել է՝ խորհուրդների նոր անդամ ընտրված հարվածայինների, բանվորների, կոլխոզնիկների, բատրակների, չքավորների ու միջակների հաշվին. ապա ուժեղացել է խորհուրդներում կոլխոզային կորիզը, բարձրացել բանվորուհիների ու գեղջիկների տեսակարար կշիռը, գյուղը բանվորական բրիգադներ ուղարկելով և այնտեղ նրանց առաջ քաշելով գյուղխորհուրդների նախագահություն՝ նշանավոր չափերով ուժեղացել է պրոլետարական ազդեցությունը խորհուրդների վրա (1929 թվին գյուղխորհուրդների նախագահներից 17,9%-ն է բանվոր ու բատրակ յեղել, իսկ 1931 թվին—27,5%-ը):

2. Հաշվետվական-վերնադրական ժողովներում աշխատավորներն ակտիվ մասնակցություն են ցույց տվել այն պայքարին, վոր տարվել է կուսակցության հիմնական գծի, խորհուրդների,—վորպես կուսակցության հիմնական գիծը տանողների—դերը բարձրացնելու, խորհուրդները աշխատանքի յերեսը դեպի կարեւորագույն ընդհանուր-քաղաքական և տնտեսական խնդիրները դարձնելու համար. խնդիրներ, վոր կուսակցությունն է առաջ քաշել հնդամյակի վճռական 3-րդ տարվա համար. այդ ժողովները ցույց տվին քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների քաղաքական ու արտադրական խանդավառությունը:

Վերնադրությունները տվել են.—կոմունիստական աշխատանքի ենտուղիաստների նոր բատալյոններ, վորտեղ մտնում են 4,000-ից ավելի քանվոր ու բանվորուհի, և վորոնք իրանց հարվածային են հայտարարել.—չքավորների ու միջակների ուժեղ հոսանք դեպի կոլխոզները, վորտեղ 1930 թվին հոկտեմբերի 1-ին յեղել է 1,300 կոլխոզ 41,760 տնտեսություններով,

իսկ 1931 թվի հունվարի 20-ին—1847 կոլխոզ՝ 56,056 տնտեսություններով.—հարվածային յեռամսյակում առանձին տնտեսական-քաղաքական աշխատանքների (մորելիզացիա ներքին ռեսուրսների, հացամթերումների և այլն) կատարում ու գերակատարում կոնտրոլային առաջադրությունների աշխատող, վորտեղ հաշվետվական-վերընտրական կամպանիան սերտ կերպով կապված է յեղել այդ տնտեսական-քաղաքական կարևորագույն խնդիրների հետ.—լայն զարգացում սոցիալիստական մրցության, բանվորների ու բանվորուհիների ամբողջական աշխատանքի տեղին՝ մինչև հնդամյակի վերջը:

3. խորհուրդների հաշվետրական-վերընտրական կամպանիան անցել է դասակարգային սրված պայքարի և գյուղի ու քաղաքի կուլակային-կապիտալիստական տարրերի շատ ուժեղ դիմադրության պայմաններում: Այդ պայքարն արտահայտվել է նրանում, վոր մի տեղ կուլակային-կապիտալիստական տարրերը համառ կերպով աշխատել են ընտրական իրավունքներ ձեռք բերել, կաշառել վոչ-կայուն անհատներին, վորպեսզի իրանց իրավական դրությունը լեգալիզացիայի յենթարկեն: մի ուրիշ տեղ կուլակը կանգ չի առել տներ ու կոլխոզային գույք հրդեհելու (Շահումյանի ռայոն), ալտիվ գործիչների ու գյուղխորհուրդների նախագահների սպանության (Բելոկանի ըուրո) առաջ. ընտրական ժողովների ժամանակ քշել է անասունները (Չուռնարադ), վիժեցրել է ժողովներն ու ձայնագրողների ցուցակները փչացրել (Լեռնային Ղարաբաղ, Չուռնարադ), պրովակացիայի է յենթարկել խորհրդային իշխանությունը, փորձել է մեծապետական ու տեղական նացիոնալիզմ ստեղծել ու բորբոքել (Հաշտարխան-Բազար, Բազու և ուրիշ տեղեր): Սակայն կուլակության բոլոր այդ փորձերը կազմակերպված հակահարված են ստացել աշխատավոր մասսաների կողմից:

4. Դրա հետ միասին համագումարը մատնանշում է, վոր հաշվետվական-վերընտրական կամպանիայի ղեկավարությունն սկզբում անթույլատրելի կերպով թույլ է տարվել մի շարք ռայոնական կազմակերպությունների կողմից (Աստարա, Բելոկանի, Կախ, Բելասուվար, Դիվիչի, Սաչմադ): Մի շարք տեղերում նախապատրաստական ու բացատրական աշխատանքը ժամանակին չի ծավալվել, վորի պատճառով ընտրողները պակաս չափով են մասնակցել հաշվետվական ժողովներին (Մարադա, 39%, Չուռնարադ—50%, Նախկրա—52%): Կանանց, բատրակների ու չքավորների հետ բավականաչափ հատուկ աշխատանք չի տարվել: առանձին ռայոններում, ժամանակի խնայողություն համար՝ անփութությունը կանանց նախնական ժողովներ ու չքավորների ժողովներ չեն գումարել (Ալի Բայրամլու, Բելասուվար, Կախ, մասամբ Սալան): վերընտրական կամպանիայի ամբողջ քաղաքական կարևորությունը թերագնահատման, ինքնահոսի վրա ուղղորտված հույս ղնելու փաստեր են յեղել, այդ կամպանիան հավասարեցնելով «հերթական» կամպանիաներին և ձգտելով այն դասավորել հերթի գնելու կարգով (Աստարա, Դիվիչի, Կախ): Այդ թերությունները հարթել են կամպանիայի ընթացքում վերջինս իրագործման ժամանակն ուշացնելով:

5. խորհուրդների հաշվետվական-վերընտրական կամպանիան ցույց է տվել աշխատանքի անբավարար լինելն ազգային փոքրամասնությունների մեջ՝ մի քանի ռայոններում, (Չուռնարադ, Հաշտարխան-Բազար, Բելասուվար). ցույց է տվել այնպես, վոր ազգային փոքրամասնությունները բավականաչափ չեն քաշվել խորհուրդների վերընտրություններին (ռուսները—60,3%,

գերմանացիք—52,4%, մինչև վ ընտրողների ընդհանուր մասնակցությունը միջին թվով 73,8% է տվել): ղեկավար են յեղել, վոր առանձին ազգային փոքրամասնություններ ռայոնի ներսի իշխանությունն որդաններում համեմատաբար անհավասար ներկայացուցչություն են տվել (Չուռնարադ):

6. Համագումարն առանձնապես մատնանշում է այն սխալները, վոր թույլ են տրվել մի քանի ռայոններում ձայնագրողների հաշվեհաման ժամանակ, վճռական միջոցներ չեն ձեռք առել լիովին յերեան հանելու ընտրական իրավունքներից զրկվելու յենթակա կուլակներին ու մյուս տարրերին (ձայնագրողների ընդհանուր % -ն է—Չիբրայիլում՝ 1,5%, Կարամարյանում՝ 1,9%, Չուռնարադ՝ 1,4%, Ղուբասու՝ 1,7%, Կուբաթլիում՝ 1,0%, Քյուրդամիր՝ 2,7%):

7. Մի շարք կազմակերպություններ չեն կարողացել աշխատավորների ուղղորդությունը կենտրոնացնել ու հաշվետվական-վերընտրական կամպանիան կապել տնտեսական-քաղաքական կարևորագույն աշխատանքների, այն է բամբակաքողին ու բամբակամթերման, դրամական ռեսուրսների մորելիզացիայի, ցանքսային կամպանիաների պատրաստության աշխատանքների իրագործման հետ, վորի հետևանքով ել պլանը նշանավոր չափերով պակաս է կատարված և թուլացրված են վերցրված տեմպերն այդ ռայոններում:

11

1. Ամբողջ ֆրոնտի վրա սոցիալիզմի ծավալուն հարձակման պայմաններում խորհուրդների ամբապնդման, «կուսակցության հիմնական, ինչպես աջ, այնպես և ձախ» ուղղությունից վերաբերմամբ ունեցած անհաշտ թշնամական գիծը վարող խորհուրդների դերը բարձրացնելու» (ՎեկԱՊե (բ)-ի Կենտրոնական Կոմիտեի հոկտեմբերյան պլենումի բանաձևվից) խնդիրը՝ խորհրդային բոլոր կազմակերպությունների կարևորագույն անելիքն է հանդիսանում:

ՎեկԱՊե (բ)-ի 15-րդ համագումարի ու 16-րդ կուսկոնֆերանսի վորոշումների համապատասխան, կուսակցությունն իրականացում է խորհուրդների աշխուժացման, խորհուրդների յերեսը ղեկի արտադրություն, աշխատավորների ամենալայն մասսաները խորհուրդների աշխատանքին քաշելու քաղաքականությունը: Այդ աշխատանքի ժամանակ կուսակցությունը դիմադրության է հանդիպում խորհրդային ապարատի ղեկավարության ուղղորտված յերեսի և հանդիպում խորհրդային ապարատի ղեկավարության ուղղորտված յերեսի և հանդիպում խորհրդային ապարատի ղեկավարության ուղղորտված յերեսի համար աշխատելով ու պայքարելով» (ՎեկԱՊե (բ)-ի 16-րդ համագումար):

Վոչ թե խոսքով, այլ գործով կուսակցությունն հիմնական գիծը տանող լավագույն գործիչներով խորհրդային ապարատի ուժեղացումը մի չեքաշիք է, վոր խորհրդային ապարատը ՎեկԱՊե (բ)-ի ղեկավարությունը վերակառուցում է իր ամբողջ աշխատանքը համաձայն սոցիալիստական վերակառուցման, ֆարրիկների, գործարանների նավթահանքերի, մեքենա-տրակտորային կայանների, կոլխոզների, սովխոզների արդ-ֆինպլանների կատարման ու գերակատարման, հնդամյակը չորս տարում կատարելու, խորհրդային Միության պաշտպանվելու կարողությունն ամրացնելու մարտական խնդիրներին:

2. Խորհուրդներն աշխատավորներին ամենալայն մասսայական կազմակերպություններն են: Վերակառուցել այդ խորհուրդներին աշխատանքը,— դա ամենից առաջ նշանակում է ուժեղացնել խորհուրդները, վորպես կուսակցություն հիմնական գիծը տանողներին,— դերն ու նշանակությունը: Նշանակում է խորհրդային ապարատից արմատախիլ անել ամեն տեսակի ոչորտունիզմի ու դեպի այդ ուղորտունիզմը յեղած հաշտվողականության միացությունները, և խորհուրդներին կազմ, առանձնապես ղեկավար կազմ ընտրել յերկրի դասակարգային ուժերի նոր փոխարարներությունների համեմատ, այսինքն՝ խորհուրդներն իրանց մեջ պետք է առնեն բանվոր դասակարգի ու գյուղացիության ամենակտիվ խավերը,— քաղաքում հարվածային բանվորներին, իսկ գյուղում առաջավոր կոլխոզնիկներին, չքավոր ու միջակներին:

